

ՎԱՏԱԳՆ ՉԱԽԱԼՅԱՆ

**ԲԱՆՏԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆ
Գ Ր Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր**

ԵՐԵՎԱՆ
«ԱՄԱՐԱՍ»
2010

ՀՏԴ 327:323 (479.25)
ԳՄԴ 66.4+66.3 (2Հ)
Չ 160

Չ 160 **Վահագն Չախալյան**
Բանտային քաղաքական գրառույններ. - Եր.:
Անարաս, 2010. - 32 էջ:

ՀՏԴ 327:323 (479.25)
ԳՄԴ 66.4+66.3 (2Հ)

ISBN 978-99930-1-123-1

© Վահագն Չախալյան, 2010 թ.

ՆԵՐԱՃԱԿԱՆ ԽՈՍՔ

Սիրելի ջավախքահայեր, սիրելի ժողովուրդ,

Ես՝ Վահագն Չախալյա՛նս, Ձեր միջից ելած մի երիտասարդ եմ, մեկը այն հազարավոր ջավախքցիներից, ովքեր անհունորեն, խենթորեն սիրում են իրենց ծնունդ տված ժողովուրդն ու երկիրը: Ինձ էլ է լուսավորում այն արեւը, որը ջերմացնում ու տաքացնում է Ձեզ, իմ կոշիկներն էլ են ցեխտավում այն ցեխաջրերում, որոնցով Դուք եք քայլում:

Այս գրառումներով ես չեմ հավակնում Ձեզ «խելք սովորեցնելու», ընդհակառակը ե՛ս սովորելու կարիք ունեմ Ձեզանից: Դրանք պարզապես մի անկեղծ խոստովանություն են, ջավախքահայության հոգսերով եւ խնդիրներով մտահոգ մարդու խոսք: Կարծում եմ, ես վաստակել եմ դրանք Ձեզ հետ կիսելու իրավունքը: Ինչքանով է ինձ հաջողվել այդ իրավունքն «իրացնել» դժվարին բանտային պայմաններում, չգիտեմ, սակայն ինչպես ասում է ժողովուրդը՝ «հանդգնությունը ճանապարհի կեսն է»:

Հունվար, 2010 թ.

ՔԱՆՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Ա. Կեղծ մեղադրանքներով եւ շինծու դատավարությամբ փորձում են օրինականացնել իմ փաստացի «գերեարումը»

Ես վստահ եմ, որ ուշ թե շուտ իրականությունը ջրի երես է դուրս գալու, պատասխանատվության են ենթարկվելու ե՛ւ իմ ընտանիքի նկատմամբ երեսանյան հարձակման պատվիրատուները, ե՛ւ՝ 2008թ. հուլիսի 17-ին երկու երիտասարդ ոստիկաններին սպանած, այդ սպանություններից առաջինը՝ Գուրգեն Շիրինյանին մեղսագրելու, իսկ երկրորդը՝ ինքնասպանության քողի տակ կոծկելու հեղինակներն ու կատարողները:

Իմ ձեռքակալությունից հետո անցած ժամանակահատվածը ցույց տվեց, որ ինձ ձեռքակալելու վրացական իշխանությունների որոշումը մեծ սխալ էր, քանի որ ժամանակն ապացուցեց այդ որոշման անարդյունավետությունը: Կարծում եմ, ինձ ձեռքակալողները այդ սխալն ամեն օր զգում են «իրենց մաշկի վրա», այն էլ՝ ծակող սրությամբ:

Վերաքննիչ դատարանում իմ դատավճիռը թողնելով անփոփոխ, վրացական իշխանությունները փորձում են ցույց տալ, որ մեր վճռականության դեմ իրենք էլ «վճռական» են եւ «անասան» իրենց որոշումներում, սակայն դա ոչ թե վճռականության, այլ, ընդհակառակը, հենց անվճռականության եւ անտրամաբանական վախի արդյունք է: Իմ մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ իմ ճակատագիրը «վճռող» մարդիկ առաջնորդվում են ոչ թե երկրի պետական պրագմատիկ շահերով, այլ ինչ-որ վերացական, «տղայական» նկատառումներով: Նրանք պատասխանատվությամբ եւ լուրջ չեն վերաբերում իմ ձեռքակալությունից հետո Ջավախքում ստեղծված նոր իրավիճակին: Նրանք չեն կարողանում սքափ մտածել եւ կայացնել տարածաշրջանի երկարաժամկետ կայունությունն սպահովելու շահերից բխող որոշումներ:

Նրանց համար կարեւորը, կարծես, ոչ թե «թագավորի մերկություն»-ը ծածկելն է, այլ այդ մերկությունը բարձրաձայնել համարձակվողներին լռեցնելը: Ձեռքակալելով ինձ՝ նրանք, գուցե, առժամանակ լուծեցին այդ խնդիրը ներքին դաշտում՝ Ջավախքում (չնայած՝ ինքս այդպես չեմ կարծում. ես բանտից էլ եմ ասում, որ «թագավորը մերկ է»), սակայն դրա փոխարեն «թագավորի մերկության» վրա հրավիրվեց արտաքին աշխարհի ուշադրությունը:

Այսօր աշխարհում գնալով ավելի շատ մարդ է սկսում գիտակցել, որ Ջավախքում տարվում է խորական քաղաքականություն, եւ պետական մակարդակով կատարվում է տարածաշրջանի հայաթափում: Գնալով ավելի շատ մարդ է խոսում դրա մասին: Եթե մինչեւ իմ ձերբակալությունը ժամանակն աշխատում էր իշխանությունների եւ նրանց տեղական մանկլավիկների օգտին, ապա այսօր ժամանակն աշխատում է ջավախքահայության եւ նրա շահերը պաշտպանող ուժերի օգտին:

Վրացական իշխանությունները պետք է ջավախքահայությանը վերադարձնեն մեզանից խլված՝ բողոքի խաղաղ հանրահավաքներ, երթեր, նստացույցեր անցկացնելու իրավունքը: Առկա խնդիրներն անհնարին է լուծել ժողովրդի բողոքի ձայնը բարձրացնողներին հալածելու, ճնշելու, ձերբակալելու կամ երկրից վտարելու միջոցով: Առավելագույնը այդ միջոցառումների «շնորհիվ» գործընթացները գնալով էլ ավելի են մտնելու փակուղի, իսկ պայքարը տեղափոխվելու է ընդհատակ, դրանից բխող բոլոր հետեւանքներով: Դրա միտումներն այսօր արդեն նշմարվում են: Այս ամենի համար պատասխանատվության ամբողջ բեռն ընկնում է նրանց վրա, ովքեր իրականացրել եւ համառորեն շարունակում են իրականացնել հալածանքների եւ ահաբեկումների այս՝ Ջավախքի պատմության մեջ աննախադեպ միջոցառումները:

Բ. Իմ ձերբակալությանը նախորդած դեպքերը ինձ ձերբակալելու համար հող ստեղծելու նպատակն էին հետապնդում

Իմ ձերբակալությանը նախորդած դեպքերը ինձ ձերբակալելու համար հող ստեղծելու նպատակ էին հետապնդում: Ավելին, իմ ձերբակալության նախապատրաստական աշխատանքներն սկսվել էին դեռեւս 2006թ. ամռանից, եւ, մասնավորապէս, 2006-ի սեպտեմբերին ոստիկանապետի պաշտոնում Սամվել Պետրոսյանի նշանակումն այդ համատեքստում պետք է դիտարկել: Դրան հաջորդեց 2006թ. հոկտեմբերին Երեւանի մատույցներում իմ եւ իմ ընտանիքի նկատմամբ կատարված հայտնի հարձակումը, «Միասնական Ջավախք»-ի անդամներ Սարանջյան Ալբերտի եւ Ջորանյան Գեորգի նկատմամբ արհեստական քրեական գործերի հարուցումը, ինչը ստիպեց նրանց լքել Ջավախքը: 2006-2007թթ. ընթացքում ֆինանսական ոստիկանությունը ստուգումներ անցկացրեց եւ

աստղաբաշխական չափերի հասնող տուգանքներ նշանակեց «Միասնական Ջավախք»-ին հարող եւ օժանդակող մի շարք գործարարների նկատմամբ, ինչի հետեւանքով ոչնչացվեցին նրանց բիզնեսները: Չերբակալվեցին եւ արհեստական, շինծու գործերով պայմանական ազատագրկման եւ գումարային տարբեր չափերի տուգանքների ենթարկվեցին Արթուր Պողոսյանը, Մնացական Համազասպյանը, Էդուարդ Մակարյանը:

2008թ. հուլիսի 17-21-ի ընթացքում տարբեր մեղադրանքներով ձերբակալվեցին նաեւ Էդուարդ եւ Արարատ Սահարյան եղբայրները, հորեղբորս տղան՝ Վարշամ Չախալյանը, Արամ Բատոյանը, Արմեն Սնիշյանը, Էդուարդ Ալվրցյանը, Գեորգ Շիրինյանը, սկաուտական շարժման տասնյակից ավել պատանիներ, հարցաքննության պատրվակով ոստիկանություն տարվեցին բազում երիտասարդներ, այդ թվում՝ Ախալքալաքում գործող «Երիտասարդական ռադիոյի» աշխատակցուհիները: Որոշ ժամանակ անց նորից ձերբակալվեց Արթուր Պողոսյանը, որի միակ «հանցանքն» այն էր, որ նա հանդգնել էր բարձրաձայն ասել, որ անհրաժեշտ է բողոքի ակցիաներ կազմակերպել ի պաշտպանություն ինձ:

Սահարյան եղբայրները կալանքի տակ պահվեցին 30 օրից ավելի, Վարշամ Չախալյանը դատապարտվեց 5 տարի պայմանական ազատագրկման՝ 10 հազար լարի տուգանքով: Արամ Բատոյանին առողջական վիճակի պատճառով «նախաքննական» շրջանում ազատ արձակեցին, Ախալքալաքից չբացակայելու ստորագրությամբ: Իմ ճակատագրին արժանանալու հեռանկարից խուսափելու համար Արամը ստիպված էր լքել հայրենի օջախը եւ այսօր գտնվում է հետախուզման մեջ:

Արթուր Պողոսյանի հետ ես հանդիպեցի Գլխանի N8 մեկուսարանում. 2008թ. դեկտեմբերի վերջին դատարանը նրան պայմանական ազատագրկման դատապարտեց՝ 100 հազար լարի տուգանքով փոխարինմամբ՝ շատ կարճ ժամկետ նշանակելով այդ աստղաբաշխական գումարը վճարելու համար: Արթուրն էլ, «Միասնական Ջավախք»-ի շատ անդամների օրինակով, հարկադրված եղավ լքել հայրենի օջախը եւ բռնել տարագրության ճամփան...

Այս ամենն ընդամենը մի մասն է այն հալածանքների, որոնք վերջին տարիներին կրել են եւ կրում են «Միասնական Ջավախք»-ի սկզբունքային անդամները: Կան հետապնդման ավելի ցավալի փաստեր, որոնք այսօր դեռեւս ենթակա չեն հրապարակման:

Գ. Ջավախքը հայաթափվում է թուրքերի եւ աղբբեջանցիների համար...

2006թ.-ի մարտի 11-ի բողոքի հանրահավաքից հետո Վրաստանում ԱՄՆ-ը դեսպանն այցելել էր Ախալքալաք: «Միասնական Ջավախք»-ի նախագահության անդամ, այն ժամանակ Ախալքալաքի քաղաքապետ Նաիրի Իրիցյանի հետ հանդիպման ժամանակ նա հավաստիացրել էր՝ «մի քիչ էլ համբերեք, ամեն ինչ լավ է լինելու, այս պահին (ռուսական ռազմաբազաների դուրսբերման վերջին փուլ) նման ակցիաները աշխատում են միմիայն ջավախքահայության դեմ»:

Հանդիպման մասնակիցները խանդավառված էին «Հազարամյակի մարտահրավերներ»-ի եւ այլ տարաբնույթ ծրագրերի շրջանակներում Ջավախքում ներդրվելիք դուլարների խոսուն մեծությունից: Ջավախքում ներդրվելիք գումարի մեծությունն այնքան շոշափելի էր, որ ոգետրել էր անգամ Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանին, եւ նա էլ Ջավախք կատարած առաջին այցելության ժամանակ տեղի հասարակական, քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում հորդորում էր համբերել, քանի որ «ամեն ինչ լավ է լինելու»: Դժբախտաբար, այս ամենի արդյունքում «լավացան» ընդամենը Ջավախքի հայաթափման, քրիստոնեաթափման տեմպերը:

Ես այնքան էլ համամիտ չեմ այն մտքի հետ, որ Ջավախքը հայաթափում են վրացիների համար: Նախ առաջին հերթին կլիմայական մեղմ պայմաններին սովոր մարդը նման դաժան պայմաններում դժվար թե ապրելու եւ աշխատելու ցանկություն ունենա: Բացի դրանից, վրացիներն իրենք էլ ունեն ժողովրդագրական լուրջ խնդիրներ, եւ մի տարածքը դատարկելու հաշվին վերաբնակեցնել մեկ այլ տարածք՝ իմաստ չունի:

Ջավախքը հայաթափվում, քրիստոնեաթափվում է թուրքերի եւ աղբբեջանցիների համար (նրանք ինչ չկարողացան անել Արցախի եւ Մեղրիի պարագայում, հաջողությամբ անում են այստեղ): Առաջին հայացքից ոչ այնքան իրական թվացող այս թեզը (ինչքան էլ որոշ մարդկանց դուրը գա, կամ չգա) վիճարկելու ենթակա չէ: Եթե ուշադիր քննենք, ապա կպարզվի, որ ջավախքահայության եւ ընդհանրապես հայության դեմ Վրաստանում աշխատող դրամագլուխը թուրքական եւ, հատկապես, աղբբեջանական ծագում ունի: Վրաստանում գործող մի շարք թուրքական եւ աղբբեջանա-

կան ընկերություններ ֆինանսավորում են ոչ միայն որոշ վրացի լրագրողներին եւ թերթերին, այլև որոշ քաղաքական գործիչներին՝ նախընտրական եւ հետընտրական փուլում: Ավելին, շնորհիվ նույն կապիտալի, ջավախքյան մի շարք հայ պաշտոնյաներ չեն խորշում բարձրաձայն հայտարարել, որ Ադրբեջանի հետ մենք՝ Ջավախքի հայերս, խնդիր չունենք, եւ ներքին կարգով հանդես են գալիս ադրբեջանա-թուրքամետ առաջարկություններով: Նման առաջարկությունների թվում են եւ՝ Կարս-Ախալքալաք երկաթգծի հիմքի վրա «ջավախքա-թուրքական» ընկերությունների ստեղծումը, եւ՝ Ախալքալաքի բիզնեսի ներկայացուցիչների երկկողմ հանդիպումները Կարսի քաղաքապետի ու գործարարների հետ, եւ՝ Թափարվան գետի վրա «ջավախքա-թուրքական» ՀԷԿ-ի կառուցումը, եւ՝ Ախալքալաք քաղաքում ազերի մրգավաճառների համար նոր շուկայի ստեղծումը՝ նրանց անվտանգությունը ջավախքյան «ծայրահեղականներից» երաշխավորող տարբեր հայտարարություն-միջոցառումներով: Միեւնույն ժամանակ, երբ Վրաստանի իշխանությունները ՀՀ-ից ներմուծվող սննդամթերքի, բանջարեղեն-մրգեղենի դեմ տարբեր խոչընդոտներ ստեղծեցին (ընդհուպ՝ ներմուծողների ձեռքակալում եւ տուգանում), այդ չինովնիկներից եւ ոչ մեկը ծայտուն իսկ չհանեց:

...Վրացական մամուլում շատ հաճախ հանդիպում ես հետեւյալ հարցադրմանը.- «ինչո՞ւ Վրաստանում բնակվող ադրբեջանցիները հայերին համաչափ սրությամբ չեն բարձրացնում լեզվի եւ կրոնի հետ կապված խնդիրներ»: Փորձեմ պատասխանել: Նախ, առաջին հերթին, կենտրոնական իշխանությունների կողմից տարվող քաղաքականությունը երկրում բնակվող հայերի եւ ադրբեջանիցների նկատմամբ որոշ չափով տարբերվում է, և երկրորդը, ադրբեջանցիների առջեւ, հայերի համեմատ, նույն սրությամբ ծառացած չէ ժողովրդագրական խնդիրը:

Թուրք-ադրբեջանական դաշինքը հստակ գիտակցում է, որ պետք չէ առանձին շրջանում փորձել լուծելու լեզվի հարց, երբ արդեն 2050թ.-ին ժողովրդագրական ներուժը թույլ կտա նրանց հավակնել Վրաստանի ամբողջ տարածքի համար ադրբեջաներենին պետական կարգավիճակ տալուն: Խորհրդային իշխանության տարիներին ադրբեջանցիների թիվը Վրաստանում կրկնապատկվել է 1926 թ. 143,9 հազարից 1989 թ. հասնելով 307,6 հազարի: Վրաստանում բնակվող ազգերից ադրբեջանցիները միակն են, որոնց տոկոսային հարաբերակցությունը Վրաստանի բնակչության

կազմում հետխորհրդային ժամանակահատվածում մեծացել է (ըստ պաշտոնական տվյալների՝ 5,7%-ից՝ 1989թ. մինչև 6,5%-ը՝ 2002թ.): Ոչ պաշտոնական հաշվարկներով 3,5-4 մլն փաստացի բնակչություն ունեցող Վրաստանում աղբբեջանցիների թիվը հասնում է 500 հազարի: Եթե այս ամենին գումարենք, որ Թուրքիան եւ Աղբբեջանը բացահայտ ակտիվ քաղաքականություն են տանում այսպես կոչված թուրք-մեցխեթցիներին «հայրենադարձելու» ուղղությամբ (ըստ որոշ տեղեկությունների, Աղբբեջանի իշխանությունները թուրք-մեցխեթցիների անվան տակ Վրաստան են ուզում «գործուղել» նաև Խորհրդային Հայաստանից փախած ազերիներին), ապա պարզ կդառնա, թե ո՛ր է գահավիժում Վրաստանը, եւ որտե՛ղ է նրա համար իրական վտանգը՝ «լեզու պահանջող» հայերի՛, թե «ոչ մի պահանջ չունեցող» ազերիների մեջ: Ցավոք, այս իրական վտանգը «չեն նկատում» ոչ միայն երկրի իշխանությունները, քաղաքական ուժերը եւ երկրի մտավորականությունը, այլեւ, աղբբեջանական հատուկ ծառայությունների կողմից տարվող հետետղական աշխատանքի շնորհիվ, անգամ ամենատես լրագրողները: Համարյա տարի եւ կես է, ինչ գտնվում են վրացական բանտերում, հնարավորինս հետետում են վրացական մամուլին եւ ընդամենը մեկ անգամ են հանդիպել Վրաստանի նկատմամբ Աղբբեջանի քաղաքականությունը քննադատող հոդվածի:

Աղբբեջանական թեմաներին չի անդրադառնում անգամ իր ազգային-ծայրահեղական ուղղվածությամբ հայտնի վրացական «Ասավալ-Դասավալի» թերթը... հո սա «հայերի կողմից իրականացվող վրաստանաքանդ քաղաքականությունը» չէ՛, քաղաքականություն, որի տարրերն են ինչպես հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու պահանջը, այնպես էլ հայ-թուրքական սահմանի բացման խնդիրը, որպեսզի լրատվամիջոցները, վերլուծական կենտրոնները՝ իրենց վայ-վերլուծաբաններով, ընդդիմության եւ դիմության տարրեր տրամաչափի գործիչները, խոսքերը մեկ արած, սկսեն աղմկել (դե, արի ու հավատա, որ Աղբբեջանի «մատն» այստեղ խառը չէ):

Այնինչ, այդ մույն վրացական մամուլը, քաղաքական գործիչները՝ իր դիմության եւ ընդդիմության ներկայացուցիչներով, գոնե մեկ անգամ չեն անդրադառնում այն հանգամանքին, որ Վրաստանի համար իսկական չարիք դարձած, բառիս բուն իմաստով՝ ժողովրդագրական անդունդի դուռը հասցրած թմրանյութերի գլխավոր մատակարարը Աղբբեջանն է, իր

վրաստանահպատակ ազգակիցների միջոցով... Բոլորը գիտեն դրա մասին, սակայն նավթա- եւ նարկոդոլարները ստիպում են լռել անգամ ամենահամարձակներին...

Դ. Վրաստանի իշխանությունները պետք է հասկանան...

Վրաստանի իշխանությունները պետք է հասկանան, ընդունեն որպես անառարկելի փաստ, որ ջավախքահայության հետ խոսելու միակ միջոցը մեզ` ջավախքահայերիս, որպես հավասար կողմ ընդունելն է, այլապես մենք չենք բանակցելու: Անկախ այն բանից, թե հարկադիր տարագրության կամ գերության մեջ ենք գտնվում, այլապես մենք չենք բանակցելու:

Վրացական իշխանություններն իրենց գործողություններով միմիայն խճճում են Ջավախքյան թնջուկը: Ինձ բանտում պահելուց նրանք ոչ մի օգուտ չեն ստացել եւ չեն ստանալու, ինչպես չստացան ինձ ձերբակալելուց: Ինձ բանտում պահելով, նրանք միմիայն նոր խնդիրներ են կուտակելու, ինչպես կուտակում են ձերբակալության օրվանից առ այսօր:

Վրացական իշխանությունները, իրենց երեւանյան եւ ախալքալաքյան «աղբյուրներ»-ից ստացված սուտ տեղեկությունների հիման վրա, ընդունեցին սխալ որոշում: Նրանք համոզված էին, որ ձերբակալելով Չախալյանին եւ չեզոքացնելով նրա շրջապատը, ջավախքահայության խնդիրը կարելի կլինի այլեւ լիովին «լուծված» համարել: Այնինչ, տեղի ունեցավ ճիշտ հակառակը` իմ ձերբակալման գործողությունը նոր որակ հարդդեց ջավախքահայության պայքարին, այն տեղափոխեց որակական նոր դաշտ, նոր հարթություն:

Նրանք սխալ էին հաշվարկել մեկ հանգամանք էս: Նրանց համոզմամբ, ինձ ձերբակալելը շատ դժվար էր լինելու (դրա համար էին 2006-2008 թթ. նախապատրաստական աշխատանքները եւ իմ ձերբակալության օրը 300-ից ավելի հատուկ ջոկատայինների Թբիլիսիից Ախալքալաք տեղափոխելը), իսկ բանտում «կոտրելու» համար եթե ոչ ժամեր, ապա ընդամենն օրեր էին պահանջվելու: Այնինչ, այստեղ էլ այլ կերպ ստացվեց: Ինձ ձերբակալելու համար կարելի էր անգամ 3 հոգով գալ, ես չէի` դիմադրելու (ճիշտ է, 3 հոգով չէին կարող 3 տղամարդու բարձերի տակ զենք դնել)... Ես ո՛չ դիմադրության, ո՛չ էլ, առավել էս, արդարադատությունից թաքնվելու կարիք ունեի: Այսպես որ, ես արդարացված չեմ համարում ինձ ձերբա-

կալելու առիթ ստեղծելու համար երկու երիտասարդ ուստիկանների ցավալի մահերի փաստի գրանցումը եւ ո՛չ էլ ուստիկանապետի տան մոտակայքում բեմադրված պայթյունի «շոու»-ն:

Է. Տարածաշրջանում գերխնդիրը խաղաղությունն ու կայունությունն է...

Տարածաշրջանում գերխնդիրը խաղաղությունն ու կայունությունն է: Եվ մենք՝ ջավախքահայության շահերը պաշտպանող ուժերս, եւ վրացական իշխանությունները պետք է գործենք փոխզիջումների դաշտում, որպեսզի խուսափենք կոնֆլիկտային իրավիճակներից: Սակայն, ցավոք սրտի, Վրաստանի իշխանությունները փոխզիջումների մասին լսել անգամ չեն ուզում, վարում են առճակատման, պառակտման, բիրտ ուժին ապավինելու քաղաքականություն՝ դրանից բխող բոլոր վտանգավոր հետեւանքներով: Տարածաշրջանում պայթյունավտանգ իրավիճակի համար պատասխանատվությունն ընկնում է վրացական կողմի վրա, քանի որ իր տնօրինած ռեսուրսների, իշխանական լծակների, ունեցած մեծաշնորհային դիրքի եւ կարգավիճակի բերումով, նրան է պատկանել եւ պատկանում նախաձեռնությունը: Ջավախքահայությունը միմիայն փորձում է պաշտպանվել, այն էլ, ռեսուրսների սղության, լծակների բացակայության պայմաններում՝ հաճախ թույլ եւ ուշացած կերպով:

Մեր շարժման ունեցած միակ, սակայն խոսուն ռեսուրսը ժողովրդի օժանդակությունն ու հավանությունն էին: Դրա վառ ապացույցը 2006թ.-ի ՏԻՄ ընտրությունների ժամանակ «Միասնական Ջավախք»-ի կողմից տարվող նախընտրական արշավի «Միասին փրկենք Ջավախքը» կարգախոսի հաղթանակն էր: Ժողովուրդը քվեարկեց մեր օգտին, քանի որ մեր կողմից բարձրացված խնդիրը, ժողովրդին մտահոգող համար առաջին խնդիրն էր՝ Ջավախքի հայապահպանության խնդիրը՝ իր լեզվական, կրոնական եւ մշակութային բաղադրիչներով: Սակայն վրացական իշխանությունները մեզ չթողեցին «վայելել» մեր հաղթանակը: «Միասնական Ջավախք»-ին իր քվեն տված ժողովուրդը պատրաստակամ էր մինչեւ վերջ տեր կանգնելու իր քվեին, եւ մենք կարող էինք ենթարկվել ժողովրդի կամքին եւ առաջնորդել ժողովրդին: Սակայն լավ գիտակցելով վրացական իշխանության մաս կազմող որոշ տհաս քաղաքական գործիչների անձնական ամբիցիաները եւ ոչ աղեկվատ պահվածքը, հանուն տարածաշրջանի խաղա-

դության եւ կայունության «Միասնական Ջավախք»-ը գնաց գիտակցական զիջումների: Բայց, ցավոք, զիջումները մնացին միակողմանի:

Վրաստանի տարածքային ամբողջականության համար կարելու պետականամետ եզրահանգումներ անելու եւ դրանցից բխող քայլեր կատարելու փոխարեն, վրացական իշխանությունները հիստերիկ կերպով լծվեցին Ջավախքի իրական խնդիրները «ջրի երես» հանած ուժի՝ «Միասնական Ջավախք»-ի կազմաքանդման, ոչնչացման գործին:

Արդյունքում՝ Ջավախքի համար «ավանդական» լեզվական, կրոնական, մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական խնդիրների կողքին մեր երկրամասում այսօր վտանգված են նաեւ խոսքի ազատությունը եւ մարդու այլ տարրական իրավունքները:

Ոստիկանական մահակների եւ հատուկ ծառայությունների կողմից ստեղծված վախի մթնոլորտը բնակչությանը պարտադրում է կամ լռելյայն բավարարվել եղածով, կամ էլ բռնել արտագաղթի ճանապարհը:

Իմ ձերբակալությունից մինչ օրս փակի տակ են գտնվում «երիտասարդական» ռադիոն, «Ջավախք-ինֆո» լրատվական գործակալությունը, ոչ-կառավարական երեք կազմակերպություն:

Փաստորեն, հենց վրացական իշխանությունների կամքով եւ նախաձեռնությամբ Ջավախքում այսօր չի գործում, կամ ոչ լիարժեք են գործում Վրաստանի Սահամանադրությունը, օրենսդրությունը, հակառակ դեպքում վաղուց պետք է ճաղերի հետեւում հայտնվեին այն բոլոր չինովնիկները, ուլքեր, չարաշահելով իրենց պաշտոնն ու դիրքը, քաղաքական տեռորի տակ են պահում երկրամասը:

Նրանց դավաճանությունից առաջին հերթին տուժում է Վրաստանը, խարխիլվում են նրա պետականության հիմքերը, կասկածի տակ է առնվում երկրի վերցված միջազգային պարտականությունների կատարումը:

2. Այսօր Ջավախքում պետական արգելք է դրված քաղաքականությանը զբաղվելու վրա...

Այսօր ջավախքահայությանը տրված չի անգամ ամենափոքր հնարավորություն քաղաքակիրթ քաղաքական գործընթացների միջոցով պայքարելու իր բարեկեցության, իր երեխաների լուսավոր ապագայի համար: Այսօր Ջավախքում պետական արգելք է դրված քաղաքականությանը զբաղվելու վրա:

Հայերը, ճիշտ է, մասնակցում են ընտրություններին, ստանում են պատգամավորական մանդատներ, սակայն այդ ամենը կրում է ձեռական բնույթ, այն օտար աչքերի համար է: Ո՛չ թեկնածուները, ո՛չ առավել եւս արդեն քվե «ստացածները» չեն համարձակվում ջավախքահայությանը հուզող հարցերից ամենատարրականը բարձրացնելու: Ջավախքահայության հուզող հարցերն այստեղ իրենց անվանումն ունեն եւ կոչվում են «մեծ քաղաքականություն»: «Մեծ քաղաքականությամբ» զբաղվող անձինք միանգամից ընկնում են վրացական ուժային կառույցների «սեւ ցուցակ», նրանք եւ նրանց շրջապատը դատապարտված են մեկուսացման, անվերջ հալածանքների եւ վտարման:

Ոչ մեծ «քաղաքականությամբ» զբաղվող անձինք (վրացական ուժային կառույցների «դաբրոն» ստացած «քաղաքական» գործիչները) չեն համարձակվում խոսել անգամ այնպիսի հարցերից, ինչպիսիք են՝ Հայոց Յեղասպանության ճանաչման ու տարելիցի նշման եւ Հայ Առաքելական եկեղեցու կարգավիճակի հարցերը:

«Մեծ քաղաքականության» ոլորտում են գտնվում անգամ մախադարոցական, տարրական, էլ չասենք՝ միջնակարգ եւ բարձրագույն կրթությանն առնչվող հարցերը:

Մարդիկ գրկված են տեղում մայրենի լեզվով լիարժեք կրթություն ստանալու հնարավորությունից: Մեզ ասում են, եթե ցանկանում եք հայերենով կրթություն՝ գնացեք Հայաստանի Հանրապետություն «իբ կրթական հաստատություններով»: Պատասխանը խորն է մտածված. մախ, քչերն են կարող ՀՀ-ում ուսման ծախսերը հոգալ, հետո՝ Երեւանում սովորած եւ Երեւանին սովորած մարդկանցից քչերն են իրենց մեջ ուժ գտնում վերադառնալ Ջավախք, իսկ փոքրաթիվ վերադարձողների ՀՀ-ում ստացած դիպլոմները շատ փոքր ուժ եւ արժեք ունեն. Ջավախքում եւ, առավել եւս, Վրաստանի այլ տարածքներում:

«Մեծ քաղաքականություն» է համարվում անգամ հայկական դպրոցների աշակերտներին Սուրբ Էջմիածին ուղտագնացության տանելը: Նման «ակցիա» կազմակերպել համարձակվող ուսուցիչները սկզբում զգուշացվում են, իսկ ոչ հնազանդները շուտափույթ կերպով հեռացվում են աշխատանքից: Եթե մնան անօրինական եղանակով աշխատանքից ազատված անձը հանդգնում է բարձրաձայն բողոքել, ապա հատուկ ծառայությունների կողմից սարքված խնդիրների առաջ է հայտնվում նրա ողջ

«ազգն ու տակը»:

Թեստավորումների ժամանակ ջավախքահայերին մասնագիտակա-
նից բացի, տալիս են նաև իրենց մասնագիտությանը ընդհանրապես չվե-
րաբերող հարցեր: Օրինակ, մի ջավախքահայ ոստիկանի տալիս են նաև
այսպիսի մի հարց. «Ու՞մ լեռն եք համարում Արարատը, հայերինը, թե՞
թուրքերինը»: Բնականաբար, հարցին պատասխանելով այնպես, ինչպես
կպատասխաներ յուրաքանչյուր հայ, տվյալ անձնավորությունը չի անց-
նում քննությունը:

Արարատը հայերի հայրենիք՝ Հայկական բարձրավանդակում գտնվող
լեռ է, որը Հայ-Քրիստոնեական Սուրբ լեռ լինելով, նաև համայն մարդկու-
թյանն է: Իսկ մենք՝ Հայկական լեռնաշխարհի բնիկներս, այսօր իրավունք
չունենք ասելու՝ մերն է, որովհետև Թբիլիսիում մատած շինովնիկը քո մեջ
կարող է բացահայտել «անջատողականության» տարրեր եւ քեզ, ընտանի-
քիդ եւ հարազատներիդ գրկել մի փոր հաց վաստակելու հնարավորու-
թյունից, Ջավախքում ապրելու հնարավորությունից:

Այսօր այդ հայաթափման, քրիստոնեաթափման քաղաքականության
շնորհիվ Ջավախքյան գյուղերի մեծամասնությունը գրկվել է բնակչության
ավելի քան հիսուն տոկոսից, որոշ «հաջողակ» գյուղերի դեպքում գրանց-
վել է ընդամենը 25-30% հայրենագրկում: Կիսով չափ կրճատվել է նաև
Ախալքալաք քաղաքի բնակիչների թիվը: Ախալցխայի մասին չեմ խոսում,
որովհետև այնտեղի հայաթափման «առաջին փուլը» (երբ հայերը մեծա-
մասնությունից վերածվեցին փոքրամասնության) տեղի ունեցավ 90-
ականների սկզբին:

Նման պայմաններում Ջավախքին սպառնում է լավագույն դեպքում
«արոտավայր դառնալու», վատագույն դեպքում՝ տարածաշրջանում մի
նոր թուրքաբնակ տարածքի ճակատագիր (թուրքերի վերաբնակեցման
գործընթացն այսօր արդեն սկսվել է): «Արոտավայրի» փաստացի
կարգավիճակ այսօր ունեն արդեն մի քանի գյուղեր, որոնց թվում իմ պա-
պենական գյուղ Մոդեգամը, որտեղ պահպանվել է 10-15 տուն
բնակչություն, հիմնականում՝ 60-ն անցած մեծահասակներ:

Այն մարդկանց հանդեպ, ովքեր փորձում են չենթարկվել խաղի այս
կանոններին, իշխանությունները անխտիր կիրառում են իրենց ձեռքի տակ
եղած օրինական եւ անօրինական բոլոր միջոցները:

Դրա ապացույցը 2008թ. հուլիսի 17-21-ի ընթացքում ախալքալաքցի

երկու հայ ոստիկանների սպանությունը եւ այդ դեպքերի մինչեւ օրս չբացահայտված լինելու փաստն է:

Գրա սպացույց՝ իմ, անչափահաս եղբորս եւ հորս ուժի անհամաչափ եւ արտակարգ կիրառմամբ ցինիկ ձեռքակալությունը:

Գրա սպացույց՝ Ջավախքի այն որդիները, ովքեր բռնի օտարվել են իրենց օջախներից, հայրենիքից:

Այսօր, այս պայմաններում, անհրաժեշտ է, որպեսզի տարածաշրջանի կայունությամբ մտահոգ միջազգային բոլոր շահագրգիռ կառույցները առանց որեւէ հապաղման օժանդակեն ջավախքահայության իրական շահերը ներկայացնող կառույցների եւ վրացական իշխանությունների միջեւ երկխոսության ծավալմանը:

Ինչքան էլ այն ծանր լինի վրացական կողմի համար, երկխոսությունը անհրաժեշտ է եւ անխուսափելի:

Է. «Վրաստանը՝ վրացիներին» կարգախոսից դեպի «Վրաստանն առանց ազգային փոքրամասնությունների» քաղաքականությունը

Ճիշտ է, այսօրվա «տարածաշրջանում ժողովրդավարության դրոշակակիր» երկրի իշխանությունները Վրաստանի առաջին նախագահ Ջվիադ Գամսախուրդիայի «Վրաստանը՝ վրացիներին» նշանաբանը բացահայտորեն չեն օգտագործում, սակայն առաջնորդվում են նույն նշանաբանի համարժեք, ուղղակի ժամանակին հարմարեցրած տարբերակով՝ «Վրաստանն առանց ազգային փոքրամասնությունների»:

Ժամանակին են «հարմարեցվել» նաեւ «պայքարի» ձեւերը՝ իշխանությունները հայտարարում են, որ «մեր քաղաքացիների վրա մենք չենք կրակում»: Այդպես է, թե՛ ոչ, ավելի լավ կիմանան վրացական ընդդիմության ներկայացուցիչները, որոնց կազմակերպած բողոքի ակցիաների ժամանակ միշտ էլ տեսանելի են վերջին վեցը տարիների ընթացքում օրինապահների կողմից սպանված երիտասարդների նկարները (սակայն այստեղ էլ խտրականություն է դրսևորվում, նույն օրինապահների կողմից սպանված ախալցխահայ Միշա Կիրակոսյանի նկարը ընդդիմությունը չգիտես ինչու, չի՛ ցուցադրում), սակայն «սեփական քաղաքացիների վրա չկրակող» իշխանությունները 2008-ի հուլիսի 17-ի դեպքերից հետո հրամայել էին Գուրգեն Շիրինյանին կենդանի չվերցնել:

Ինչեւէ, այսօրվա ազգայնական-«ժողովրդավարները» գերադասում են նոր ժամանակներին հարմարեցված միջոցներ՝ նրանք, «սեփական երկրի քաղաքացիների» վրա կրակելու փոխարեն (չհաշված երկու տասնյակ դեպքերը), այդ քաղաքացիներին ձերբակալում են, տուգանում են, «հարկում» են, սպառնում են, հետապնդում են, հեռախոսներն են գաղտնալսում, հետետում են եւ այլն, եւ այլն...

Այս ամենը նորանոր վերքեր է առաջացնում Վրաստանի այն տարածքների վրա, որտեղ ապրում են ազգային փոքրամասնությունները, վերքեր, որոնք դժվար հետագայում կսպիանան:

Ը. Մենք շարունակելու ենք պայքարը...

2005թ.-ի հանրահավաքներից հետո մեր շարժման նկատմամբ սկսվեց վարկաբեկման մի աննախադեպ գործընթաց: Ես այստեղ ուզում եմ խոսել ոչ թե իմ ղեկավարած շարժման վերաբերյալ ակտիվորեն տարածվող հերյուրանքների մասին (որոնք լայն շրջանակի էին՝ սկսած պաշտոնների կամ գումարների ստացման դիմաց մեր պայքարից հրաժարվելուց, տարբեր ուժային կենտրոնների ազդեցության գործակալներ լինելուց, վերջացրած՝ իմ անձնական, ընտանեկան կյանքի հետ կապվածներից, որոնցից մեկն այն էր, թե ես, իբր, ամուսնացել էի վրացական ազգային անվտանգության բարձրաստիճան չինովնիկի աղջկա հետ...), քանի որ համոզված եմ, որ դրանցից եւ ոչ մեկը չի՝ դիմացել ու չի՝ դիմանալու ժամանակի քննությանը:

Մեզ ուղղված հիմնական մեղադրանքն այն էր, որ «մենք մինչեւ վերջ չգնացինք»: Առավել ակտիվ էին մեզ մեղադրողների եւ հերյուրանքներ տարածողների մեջ նրանք, ովքեր ժամանակին իրենց «մինչեւ վերջ պայքարն» ավարտել էին տեղական պաշտոնների հասնելով: Խոսենք «մինչեւ վերջ պայքարելու» գաղափարի մասին... քանի որ դա իսկապես ջախխաբահայության համար (հայտնի տխուր փորձից ելնելով) լուրջ մտահոգության առարկա է: «Մինչեւ վերջ» ասելով մենք նախ եւ առաջ պետք է հասկանանք, թե որն ենք համարում վերջ, եւ որը՝ սկիզբ: Մեր՝ ջավախքահայության համար գերխնդիրը հայապահպանության խնդիրն է, հայրենապահպանության խնդիրն է: Մեր նպատակն է ջավախքակործան արտագաղթի դադարեցումը, երբ կդադարի տարածաշրջանից բնիկների

դուրս մղմանն ուղղված քաղաքականությունը, երբ չի՝ լինի այն վտանգը, այն մտահոգությունը, որն ունի այսօր ջավախքցին:

Իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել ջավախքահայության գոյատևման նվազագույն պայմանները՝ չկպնել մեր «պատվին, կրոնին, լեզվին»: Վրացական իշխանությունները պետք է հասկանան, որ ինչքան էլ տհաճ լինեն իրենց համար ջավախքահայության կողմից առաջ քաշվող հարցերը, նրանք պարտավոր են հենց առաջին հերթին հանուն Վրաստանի ապագայի այդ կարեւոր խնդիրներին հրատապ լուծում տալ: Վրացական իշխանությունները պետք է հասկանան, որ մեր պահանջները համեստ են... Մենք ասում ենք. տվեք այն հնարավորը, որը դուք կարող եք, եւ այն նվազագույնը, որը օդի պես անհրաժեշտ է մեզ գոյատեւելու եւ մարդ զգալու համար, 21-րդ դարում ազա՛տ, հավասար իրավունքներ եւ հնարավորություններ ունեցող քաղաքացի զգալու համար: Ընդամենը այդքանը:

Վրացական իշխանությունները, վրաց հանրությունը պետք է, վերջիվերջո, փորձեն հասկանալ, որ, փորձելով հայաթափելով Ջավախքը, ամենամեծ կորուստը հենց իրենք են կրելու: Վրացական իշխանություններին երբեւիցե չի՝ հաջողվի հասնել Ջավախքի հայաթափմանը, այդ ուղղությամբ քաղաքականությունը Վրաստանին միայն հասցնելու է նորանոր անդառնալի կորուստների:

Ջավախքի հայապահպանության խնդիրը չի հակասում ո՛չ Ռուսաստանի, ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ Եվրամիության, եւ ո՛չ էլ Չինաստանի շահերին, Ջավախքի հայաթափումից շահելու է միմիայն թուրք-ադրբեջանական դաշինքը...

Ազա՛տ, հավասար զգալով է, որ մենք կկարողանանք ընդհանուր ջանքերով պահպանել տարածաշրջանի խաղաղ, բնականոն զարգացումը, որը, իմ կարծիքով ինչպես մեզ է անհրաժեշտ, այնպես էլ՝ վրացական կողմին:

Մեր շարժումը ոչ միայն հստակ գիտակցում էր, թե ուր է գնում եւ ինչ է ուզում, այսինքն՝ որն է ջավախքահայության նպատակը եւ առաջնահերթ խնդիրը, այլեւ մենք մեր պայքարի առաջին իսկ օրից պատկերացրել ենք, թե մեզանից ի՛նչ նվիրում եւ ի՛նչ գոհողություն է անհրաժեշտ, եւ միշտ էլ պատրաստ ենք եղել դրան: Այդ պատճառով էլ 2008-ի հուլիսի 17-21-ի գործողությունները, դրան նախորդած եւ հետեւող դեպքերը մեր համար անակնկալ չէին:

Չնայած այն բանին, որ ջավախքահայությունն իր նորագույն պատմու-

թյան ընթացքում բազում անգամներ «վկա» է եղել, թե ինչպես իր ծոցից ելած որդիները, շահարկելով Ջավախքում եղած խնդիրները, արդյունքում լուծել են անձնական նպատակներ, չնայած այն բանին, որ խաբվածության տխուր փորձից ելնելով նա դարձել էր շատ անվստահ, սակայն մեր նվիրումը, մեր գրկանքները, մեր աչքերի մեջ երեսացող կրակն իր խավարում տեսնելով, ջավախքահայությունը հավատաց մեզ եւ քայլեց մեր կողքին:

Այսօր, անկախ այն բանից, թե ինչ դժվարությունների մեջ ենք գտնվում, մենք իրավունք չունենք հուսախաբ անելու մեր բազմաչարչար՝ իր լեռների եւ լճերի պես վեհ ու մաքուր ժողովրդին, որի խնդիրները միայն շահարկելու եւ պաշտոններ ստանալու համար չեն, եւ իր զավակների մեջ կան մարդիկ, ովքեր դրանց լուծման համար պատրաստ են անձնական գրկանքների եւ գոհողությունների:

Ջավախքահայությանն անհրաժեշտ է մի քիչ ավելի՝ քաջություն, մի քիչ ավելի՝ համարձակություն, մի քիչ ավելի՝ կազմակերպվածություն: Ամենագլխավորը՝ մենք պետք է մեր միջից ի սպառ վերացնենք անտարբերությունը, անտարբերություն, որը մենք այսօր ցուցաբերում ենք մեր իսկ ճակատագրի հանդեպ, մեր բարեկամի, մեր հարեւանի, ինքներս մեր հանդեպ, հանցավոր անտարբերություն, որի համար ստիպված են լինելու վճարել մեր զավակները: Պետք է մեր միջից ի սպառ ջնջենք «ինձանից հեռու, մնացածի գլուխն էլ՝ քար» մոտեցումը. Այսօր կործանելով Չեր ձախ հարեւանին , վաղը՝ աջին, երրորդ օրը հերթը քե՛զ է հասնելու:

Գիտակցեք, որ մենք մեր պայքարում մենակ չենք, ջավախքահայության կողքին կանգնած է ամբողջ հայությունը՝ Հայաստանում եւ սփյուռքում: Մենք պետք է ուս-ուսի պայքարենք մեր իրավունքների համար՝ մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար, պետք է հստակ գիտակցենք, որ այս արեւի տակ անգամ մի փոքր տեղ ունենալու համար ազգերն ու ժողովուրդները դատապարտված են հարատեւ ու ծանր պայքարի, վա՛յ նրան, ով կծուլանա, վա՛յ նրան՝ ով կվախենա, վա՛յ նրան, ով կհապաղի եւ կթերանա:

Նոյեմբեր, 2009թ. - հունվար, 2010 թ.

Վահագն Չախալյանի հայտարարությունը՝ արված Ախալցխայի շրջանային դատարանում, 2009թ. հունվարի 28-ին

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինք» քաղաքական շարժումը, որի առաջնորդն են ես հանդիսանում, իր հիմնադրման պահից ստանձնեց ջավախքահայության եւ վիրահայության խնդիրների լուծման հետապնդումը:

Խնդիրները բազմաթիվ էին եւ՝ ե՛ն: Վրացական իշխանություններն իրականացնում են հետետղական քայլեր՝ ուղղված ջավախքահայության արտագաղթի խրախուսմանը եւ տարածաշրջանում առկա էթնիկական պատկերի փոփոխմանը: Այսպես, Ախալքալաքում գործում է պետական ԲՌԻՀ, որի ուսանողների շուրջ 70%-ը ազգությամբ վրացի են, Նինոծմինդայում գործում է վրացական մանկատուն, կառուցվում է քրեակատարողական մեծ հիմնարկ: Շարունակական փորձեր են արվում վրացականացնել հայկական եկեղեցիներ, ստեղծվում են վրացական մենաստաններ: Ջավախքում պարտադրվում է վրացերեն լեզվի ոչ այլընտրանքային օգտագործումը հանրային կյանքի բոլոր բնագավառներում, ջավախքահային չի տրվում մայրենի լեզվի հիմքի վրա տեղում համալսարան հիմնադրելու հնարավորություն եւ այլն:

2006թ. մարտի 9-ին Ծալկա քաղաքում ազգությամբ հայ Գետրգ Գետրգյանի սպանությունը եւ վրաց ոստիկանության կողմից սպանվածի հարազատների եւ ընկերների ցույցի ուժով ցրումը առաջացրեց ջավախքահայության արդարացի բողոքի պոռթկում: «Միասնական Ջավախք»-ն առաջնորդեց ժողովրդական բողոքի այս ալիքը:

Ժողովրդական զանգվածային բողոքի յուրաքանչյուր դրսեւորումից հետո, որպես «Միասնական Ջավախք»-ի առաջնորդ, ես հանդիպումներ էի ունենում վրացական իշխանության ներկայացուցիչների հետ: Նրանց կողմից տրվում էին հայ բնակչության խնդիրները լուծելու խոստումներ, որոնք այդպես էլ մնում էին չիրականացված: Իշխանությունների խորհուրդն էր՝ զերծ մնալ ժողովրդական բողոքի զանգվածային միջոցառումներից եւ ջավախքահայության նպատակները հետապնդել ընտրություններին եւ այլ ժողովրդավարական գործընթացներին մասնակցելու միջոցով:

«Միասնական Ջավախք»-ը հետեւեց այդ խորհրդին: Մասնակցեցին 2006թ. հոկտեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Սակայն իշխանության կողմից թույլ տված աղաղակող եւ բացահայտ խախտումները գրկեցին «Միասնական Ջավախք»-ին շրջանային կառավարման մարմիններում որեւէ նշանակալից ներկայություն ունենալու հնարավորությունից: «Միասնական Ջավախք»-ի կողմից կազմակերպված խաղաղ բողոքի ցույցը, սադրանքի եւ ուժի գործադրմամբ, խեղդվեց ոստիկանության կողմից:

2007թ. ընթացքում վրաց իշխանություններն սկսեցին հետետողականորեն իրականացնել «Միասնական Ջավախք»-ի կազմալուծման եւ իմ` քաղաքական մեկուսացման ու չեզոքացման ծրագիրը, որի գագաթնակետը դարձան 2008թ. հուլիսի 17-21-ի գործողությունները:

Այսօր, 6 ամիս անազատությունից հետո, վրացական իշխանություններն ինձ դատում են 2006թ. Ախալքալաքում տեղի ունեցած ցույցերի համար. ա՛յն ցույցերի, որոնց միջոցով ջավախքահայերը բարձրացնում էին իրենց հուզող խնդիրները եւ վրաց իշխանություններից պահանջում` տալ դրանց լուծումները, ա՛յն ցույցերի, որոնց ընթացքում ջավախքահայությունն իր խաղաղ բողոքի ձայնն էր բարձրացնում ՏԻՄ ընտրություններում տեղ գտած աղաղակող խախտումների դեմ եւ պահանջում` անվավեր ճանաչել դրանց արդյունքները:

Արդ, դատարանի դահլիճից հայտարարում եմ. այս դատարավարությունը զավեշտական բեմադրություն է, իսկ դրա անընդհատ հետաձգման պատճառը վրացական իշխանությունների իմ` որպես ջավախքահայության իրավունքների կրող քաղաքական գործչի նկատմամբ տաժած վախն է: Ի դեմս ինձ, դուք դատում եք Ձեր երկրի հայ փոքրամասնությանը:

Այդ վախի արդյունքն են մաես հունվարի 22-ին Ախալցխայի հայ գործիչներ Գրիգոր Սինասյանի եւ Սարգիս Հակոբջանյանի ձերբակալությունները: Դա մի նոր սադրանք է, որն ընդամենը նպատակ է հետապնդում ջավախքահայությանը մղել ծայրահեղական քայլերի եւ դրանով վարկաբեկել ջավախքահայության կողմից իր լեզվական, կրթական եւ կրոնական իրավունքների համար տարվող խաղաղ պայքարը:

Արդ, պահանջել եւ պահանջում եմ վրացական իշխանություններից`

1. Կասեցնել «Միասնական Ջավախք»-ի անդամների, իմ ազգականների եւ ընկերների, ինչպես նաեւ իմ դեմ հարուցված բոլոր քրեական գործերը, դադարեցնել բոլոր քաղաքական եւ տնտեսական հալածանքները: Ազատ արձակել հայ փոքրամասնության իրավունքների պաշտպանության գործունեության համար ձերբակալված բոլոր քաղաքական բանտարկյալներին, այդ թվում՝ Ախալցխայում վերջերս ձերբակալված անձանց:

2. Կասեցնել Սամցխե-Ջավախք նահանգի եւ Ծալկայի շրջանի ժողովրդագրական պատկերի արհեստական փոփոխմանն ուղղված բոլոր ծրագրերը.

3. Կատարել իմ ձերբակալությանը նախորդած դեպքերի եւ, մասնավորապես, ազգությամբ հայ երկու ոստիկանի սպանության արդար եւ անկողմնակալ հետաքննություն.

4. Լուծել վիրահայությանն ու ջավախքահայությանը հուզող բոլոր լեզվա-կրթական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային խնդիրները եւ մասնավորապես.

- Գրանցել Հայ Առաքելական Եկեղեցին, վերադարձնել խորհրդային իշխանության տարիների ընթացքում նրանից բռնագրավված բոլոր տաճարները.

- Սամցխե-Ջավախք նահանգում եւ Ծալկայի շրջանում օրենսդրորեն թույլատրել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքում եւ ընդհանուր գործավարության մեջ հայոց լեզվի օգտագործումը.

- Արտոնել Ախալքալաքում հայկական համալսարանի հիմնադրումը: Գատերի եւ հալածանքների միջոցով վրացական իշխանություններին չի՝ հաջողվի որեւէ հարց լուծել. դրանք միայն խորացնելու են առկա դժգոհությունը:

Ջավախքահայությունը շարունակելու է իր պայքարը:

Ախալցխա, 28 հունվար, 2009թ.

*Վահագն Չախալյանի բաց նամակը
Վրաստանի նախագահ Մ. Սասկաշվիլիին*

Մեծարգո պարոն Նախագահ

Վրաստանի անկախացումից հետո Գամսախուրդիայի եւ Շեւարդնաձեի վարչակարգերը որդեգրեցին Ջավախքի խնդիրների արհամարհման եւ մեզ՝ զավախքահայերիս անջատողական ընկալելու եւ այդ երեւակայական անջատողականությունը ճնշելու քաղաքականություն: Դուք նույնպես, ցավոք սրտի, շարունակեցիք Ձեր նախորդների անհեռատես քաղաքականությունը՝ ջավախքահայությանը ներկայացնելով որպես երկրի ամբողջականության համար հույժ վտանգավոր տարր, իսկ այն հանգամանքը, որ Ջավախքը դեռ չի անջատվել, վերագրեցիք Ձեր ճկուն, նախագուշական միջոցառումներին:

Ամբողջ աշխարհով մեկ Դուք սկսեցիք թմբկահարել, որ ջավախքահայերին, համահավասար եւ «ինտեգրված» քաղաքացի լինելու համար բացակայում է միայն վրացերենի իմացությունը, սակայն այդ «կամակոր» եւ «երախտամոռ» քաղաքացիներն իրենց համառությամբ տապալում են պետության կողմից ձեռնարկվող լեզվի ուսուցման բազմամիլիոնանոց ծրագրերը...

Պարոն Նախագահ, հավատացեք, որ եթե ցանկություն կա սովորելու, ապա ցանկացողին չի կարող խոչընդոտել ո՛չ մի հանգամանք: Եվ ընդհակառակը, եթե մման ցանկություն չկա, ապա ո՛չ մի գումար, ո՛չ մի պարտադրանք, ո՛չ մի ճնշում չեն կարողանալու 21-րդ դարում մարդուն ստիպել անելու այն, ինչ իր կամքին հակառակ է: Վատագույն դեպքում մա կբռնի բողոքի եւ արտագաղթի ճանապարհը...

Ուստի, պետք է ձեռնարկել միջոցներ, որպեսզի Վրաստանում բնակվող յուրաքանչյուր ազգային փոքրամասնության ներկայացուցիչ անհրաժեշտություն զգա տիրապետելու վրացերենին: Բայց որպեսզի մման պետք առաջանա, անհրաժեշտ է Վրաստանում բնակվող բոլոր ժողովրդների հավասարությունը, օրենքի գերակայությունը եւ ազատությունը երաշխավորող գործնական քայլեր ձեռնարկել: Գլխավորը սա՛ է:

Մինչդեռ, Դուք՝ բանտի, դատախազության, ոստիկանության եւ դատարանի նոր շենքեր կառուցելուց, զինվորական ոստիկանության եւ շրջա-

նային ուստիկանների թիվը կրկնապատկելուց, հատուկ ծառայությունների տեղական կառույցները հզորացնելուց, ինչպես նաև ջավախքահայության իրավունքների՝ այսինքն տարածաշրջանի իրական, այլ ո՛չ թե ձեռական եւ ժամանակավոր կայունության համար պայքարող անձանց հետապնդելուց եւ արտաքսելուց բացի ուրիշ ոչինչ չկարողացաք առաջարկել ջավախքահայությանը:

Մեծագույն սխալ էր նաև Ջավախքը մահակի տակ պահելու տեսանկյունից առանցքային հանդիսացող Ախալքալաքի ուստիկանապետի պաշտոնում մեծ եւ փոքր սաղրանքներ կազմակերպելու ընդունակություններով օժտված մարդու նշանակումը եւ նրան ջավախքահայությունը «սանձի տակ» պահելու անսահմանափակ լիազորություններով օժտելը: Արդյոք, Ձեզ համար պարզ չէ՞ր, որ հալածանքների միջոցով կարելի է հասնել լոկ կարճաժամկետ «հաջողությունների», իսկ երկարաժամկետ առումով դրանք միմիայն ավելացնելու են ջավախքահայության մեջ անվստահության եւ օտարման երեւոյթները վրացական իշխանությունների նկատմամբ: Իսկ գուցե դա՞ էր Ձեր նպատակը:...

Պարոն Նախագահ, մինչեւ ե՞րբ պիտի շարունակվի Ձեր նախորդներից Ձեզ ժառանգած այս քաղաքականությունը: Ժամանակը չէ՞, արդյոք, լծվելու ջավախքահայությանը հուզող քաղաքական, լեզվա-մշակութային, կրթական եւ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման կարևոր առաքելությանը, թեկուզ աստիճանաբար՝ քայլ առ քայլ:...

Հերիք չէ՞, արդյոք, որ կենտրոնական իշխանության ներկայացուցիչները մասնավոր գրույցներում ազգային փոքրամասնությունների խնդիրների լուծման բնագավառում իրենց անգործության գլխավոր «մեղավոր» հռչակեն երկրի մեծամասնություն՝ տիտղոսակիր ազգի դիմադրությունը: «Մեծամասնությունը» վերջին 20 տարիների տխուր փորձից ելնելով, այո, ունի մտավախություններ, սակայն նա շատ լավ, անգամ իշխանություններից էլ լավ է գիտակցում, որ կորուստներ միգուցե չլինեին, եթե Յխինվալի դպրոցներում ժամանակին չարգելվեր օսերենով դասավանդումը:...

Ժամանակը չէ՞, արդյոք, վերջ տալու վրացական իշխանությունների այն մոտեցմանը, որ ավելի լավ է լուրջ հարցերին լուծում տալու փոխարեն որելիցե տնտեսական զիջում անել Ջավախքում գոյություն ունեցող եւ հենց կենտրոնից ստեղծված ու սնուցվող տարբեր կլաններին: Նման ան-

հեռատես քաղաքականությունը ոչ թե քանդում է ջավախքյան թնջուկը, այլ ընդհակառակը՝ օր-օրի դարձնում այն ավելի խճճված եւ անվերահսկելի...

Ժամանակը չէ՞, արդյոք, միջոցներ ձեռնարկել կենտրոնական իշխանությունների նկատմամբ երկրամասի բնակչության օր-օրի նվազող վստահությունը վերականգնելու ուղղությամբ: Դուք ունեք այդ հնարավորությունը, բայց, ցավոք, մինչ օրս այդպես էլ չեք փորձել օգտվել դրանից:

Ջավախքահայությունը պատրաստ է երկխոսության: Մենք դեռեւս հույս ունենք, որ ստիպված չենք լինելու երկու բարեկամ ժողովուրդներին վերաբերող խնդիրների լուծումները վաղը փնտրել եվրոպական եւ միջազգային ատյաններում: Մնում է միայն մեկ բան՝ որպեսզի Դուք ընդունեք այդ երկխոսության հրավերը:

Փորձե՛ք սկսել հենց այսօր:

**Վահագն Չախալյան,
Հետադարձ հասցե՝ Վրաստան, N8
քրեակատարողական հիմնարկ,
Ե մասնաշենք, բանտախուց N117
Մարտ, 2009թ.**

*Վահագն Չախալյանի պաշտպանական խոսքը՝ ստված
Ախալցխայի շրջանային դատարանում, 2009թ. ապրիլի 7-ին*

Ավարտին է մոտենում իմ նկատմամբ տարվող այս դատավարությունը, որը ես կարող եմ որակել միայն մի բառով՝ **խայտառակ**:

Խայտառակ՝ իր բազմաթիվ եւ առտառոց անօրինականություններով,

Խայտառակ՝ իր շինծու եւ հապճեպորեն սարքված «ապացույցներով»,

Խայտառակ՝ իր բացառապես ուժային կառույցների աշխատակից-վկաներով:

1. Վրացական իշխանությունները եւ դուք՝ իշխանությունների հլու հնազանդ կամակատար դատարան՝ արեցիք ամեն ինչ, որպեսզի իմ հայրը, կրտսեր եղբայրը եւ ես հնարավորություն չունենանք լիարժեքորեն պաշտպանվել,
2. Տեղափոխեցիք դատավարությունը Ախալցխա,
3. Չորս ու կես ամիս անօրինական կալանքի տակ պահեցիք իմ կրտսեր եղբորը՝ ըստ էության պահելով նրան որպես պատանդ՝ իմ վրա ճնշում գործադրելու նպատակով,
4. Հնարավորինս ձգձգեցիք դատավարությունը, հույս ունենալով, որ ես կհյուծվեմ եւ կզնամ ինչ-ինչ զիջումների,
5. Անօրինականորեն գրկեցիք ինձ ֆրանսիացի փաստաբան Պատրիկ Արապյանի ծառայություններից,
6. Ահաբեկեցիք իմ ընկերներին եւ համախոհներին, որպեսզի նրանք չհամարձակվեն կանգնել դատարանի առջեւ եւ վկայություն տան իմ օգտին,
7. Առավելագույնս խստացրեցիք իմ բանտային պայմանները՝ երկար ժամանակ գրկելով ինձ գիրք-գրականություն ունենալու եւ լրատվություն ստանալու հնարավորությունից,
8. Մերժեցիք պաշտպանական կողմի գրեթե բոլոր դատական միջնորդությունները,
9. Անգամ չսպահովեցիք դատական գործընթացի քիչ թե շատ պատշաճ թարգմանություն:

Հիմա էլ եկավ այս բեմականացված խայտառակ դատավարության եզրափակիչ արարը՝ իմ հոր, կրտսեր եղբոր եւ իմ նկատմամբ դատավճիռ հնչեցնելու պահը:

Այս խայտառակ դատավարության հիմնական նպատակն է ահաբեկել ջավախքահայությանը, խեղդել ջավախքահայության պահանջատիրությունը՝ գործնականում ցույց տալով, որ իր իրավունքների պաշտպանության եւ իր առջեւ ծառայած խնդիրների բարձրաձայնման համար խաղաղ ցույցեր եւ հանրահավաքներ կազմակերպելը քրեորեն պատժելի արարք է, եւ իշխանությունները վճռական են՝ հետետողականորեն ոչնչացնելու բողոքի ցանկացած դրսեւորում:

Եթե իշխանությունները մտածում են, որ այս շինծու դատավարությամբ ինձ ազատագրկման դատապարտելով նրանց կհաջողվի հասնել վերոնշյալ նպատակին՝ լռեցնել ջավախքահայությանը, դատապարտել նրան լուռումուռ արտագաղթի, ապա նրանք չարաչար սխալվում են: Ինձ ազատագրկման դատապարտելով, դուք որեւէ հարց չեք լուծի:

Դուք ձախողվել եք:

Եթե դուք հույս ունեիք, որ իմ նկատմամբ այս հաշվեհարդարն անցնելու է աննկատ եւ ծածուկ պայմաններում, ապա՝ չարաչար սխալվեցիք: Այս շինծու դատավարությամբ Դուք ամբողջ աշխարհին ցույց տվեցիք, որ վրացական իշխանությունները, փոխանակ երկխոսություն ծավալելու ջավախքահայության հետ, նախընտրում են «հարց լուծել» հալածանքների եւ ճնշումների միջոցով: Ի լուր աշխարհի դուք մերկացրեցիք ջավախքահայության նկատմամբ ձեր խտրական քաղաքականությունը:

Արդ, վրացական իշխանություններից եւ այս դատարանից եւ նորից պահանջում եմ՝

1. Անմեղ ճանաչել իմ հորը, կրտսեր եղբորը եւ ինձ՝ մեզ առաջադրված բոլոր մեղադրանքներից, դադարեցնել «Սիասնական Ջավախք»-ի անդամների, իմ ազգականների եւ ընկերների նկատմամբ բոլոր հալածանքները, կասեցնել քրեական գործերը, վերադարձնել բռնագրավված գույքը, փոխհատուցել այս անօրինական գործընթացների հետեւանքով առաջացած բոլոր վնասները:
2. Կատարել իմ ձերբակալությանը նախորդած դեպքերի եւ, մասնավոր-

րապես, ազգությամբ հայ երկու ոստիկանի սպանության արդար եւ անկողմնակալ հետաքննությունը, պատժել այդ սպանությունների իրական կատարողներին:

3. Լուծել ջավախքահայությանն ու վիրահայությանը հուզող բոլոր կրոնական, լեզվա-կրթական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային խնդիրները:

Անկախ այն բանից, դատապարտելու եք ինձ ազատագրկման, թե՛ ոչ, ջավախքահայությունը հետետղականորեն շարունակելու է իր իրավունքների համար տարվող պայքարը:

Նույնպես եւ ես՝ հետևողականորեն պայքարելու եմ իմ նկատմամբ արդարության վերականգնման համար տեղական եւ միջազգային բոլոր ատյաններում:

Ախալցխա, 07 ապրիլ, 2009թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Վահագն Չախալյանի քաղաքական գործունեությունը 2001-2008թթ.

Իր հասարակական գործունեությունը Վահագն Չախալյանն սկսել է 2001թ., երբ իր զինակիցների հետ ստեղծեց «Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միությունը» (այսուհետև՝ «ՋԵՄՄ»):

2001թ. ապրիլի 24-ին Ախալքալաքում Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված երթը Սիոթյան առաջին խոշոր միջոցառումն էր: Հետագայում այդ օրն անցկացվող երթը դարձավ ավանդական: «ՋԵՄՄ»-ի հաջորդ նախաձեռնությունը 2001թ. ամռանը «Ջավախքի սկաուտական շարժման» ստեղծումն էր, որի շնորհիվ 2001-2008թթ. Ջավախքի տարբեր բնակավայրերի մի քանի հարյուր հայ պատանիներ ստացան հայրենասիրական դաստիարակություն և ձեռք բերեցին սկաուտության հիմնական հմտությունները:

2002թ. աշնանը «ՋԵՄՄ»-ն Ախալքալաքում հիմնեց «Տորք Անգեղ» մարզադպրոցը՝ 7 մարզաձևերի դասավանդմամբ: Հետագա 5 տարիների ընթացքում դպրոցի մասնաճյուղեր բացվեցին Նինոծմինդայում և Ջավախքի մի քանի գյուղերում:

2002թ. հունվարին ստեղծվեց «Ջավախքի երիտասարդական ռադիո»-ն, որը շուտով մեծ ժողովրդականություն ձեռք բերեց Ջավախքում:

2002թ. մարտին հիմնադրվեց երկրամասի խնդիրների մասին օբյեկտիվ տեղեկատվություն հաղորդող «Քաջատուն» թերթը, իսկ 2006թ.՝ «Ջավախք ինֆո» տեղեկատվական գործակալությունը: Այդ ՋԼՄ-ներն իրենց գործունեությամբ մասամբ ճեղքում էին այն տեղեկատվական շրջափակումը, որում հայտնվել էր Ջավախքը:

2003-ից «Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միությունը», ելնելով ստեղծված իրավիճակից, սկսեց վրացական իշխանությունների խտրական գործողությունների դեմ Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության բողոքի ակցիաներ կազմակերպել: Այսպես, 2003թ. մայիսին կազմակերպվեց բողոքի ցույց՝ ընդդեմ վրաց-հայկական սահմանում առկա կամայականությունների և կոռուպցիայի: Այդ ակցիայի շնորհիվ կոռուպցիոն երևույթները սահմանի վրա որոշ ժամանակով նվազեցին:

2004 թ. ապրիլի 9-ին վրաց հոգևորականները, Վրաստանի վարչա-

պետ Ջ. Ժվանիայի և վրաց պատրիարք Իլիա Բ-ի գլխավորությամբ, փորձեցին վրացականացնել հերթական հայկական եկեղեցին՝ Գումբուրդո գյուղի 10-րդ դարում կառուցված սբ. Հարությունը: Մակայն Վահագն Չախալյանի գլխավորությամբ ՁԵՄՄ-ի անդամներն ու տեղի բնակչությունը չընկրկեցին և կարողացան պաշտպանել հայկական այդ սրբավայրը, իսկ վրացիները հարկադրված եղան հեռանալ:

2005թ. մարտի սկզբին Ջավախքում հիմնադրվեց «Միասնական Ջավախք» ժողովրդական դաշինքը, որի կորիզը կազմեց «ՁԵՄՄ»-ը: 2005թ. մարտի 13-ին և 31-ին Ախալքալաքում «Միասնական Ջավախք»-ը կազմակերպեց աննախադեպ բազմահազարանոց բողոքի ցույցեր՝ ընդդեմ հայ բնակչության իրավունքների ոտնահարման: Արդյունքում՝ վրացական իշխանությունները կատարեցին ցուցարարների պահանջներից մեկը՝ «անձնագրային սեղան» գրասենյակը Ախալքալաքի կրկին տեղափոխեցին Ախալքալաք:

2005թ. հուլիսին վրաց հոգևորականության ներկայացուցիչները Սամցխե-Ջավախեթի նահանգի պաշտոնատար անձանց, ներքին գործերի նախարարության աշխատակիցների և վրաց ուսանողների հետ միասին փորձեցին վրացականացնել Սամսար գյուղի հայկական միջնադարյան եկեղեցին: «Միասնական Ջավախք»-ն արձագանքեց Սամսարի բնակիչների խնդրանքին և այնտեղ ուղարկեց իր ակտիվիստներից մի քանիսին: Նրանք էլ կազմակերպեցին տեղի բնակչության դիմադրությունը, որի շնորհիվ վրացիները վտարվեցին գյուղից, և հայկական եկեղեցին փրկվեց:

ՀՀ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի եւ Վրաստանի վարչապետ Նոդաիդեիի 2005թ. հուլիսի 24-ին Ախալքալաք կատարած այցի ժամանակ Վահագն Չախալյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է ցույց ջավախքահայությանը հուզող խնդիրների առնչությամբ (Կարս-Ախալքալաք երկաթգծի շինարարության կասեցում, Ջավախքում հայկական համալսարանի հիմնադրում, Ջավախքում հայաթափման գործընթացների կասեցում եւ այլն): Ցույցի մասնակիցները նշված պահանջներով նամակ փոխանցեցին երկու վարչապետներին:

2005թ. դեկտեմբերի 12-ին աշխատանքից հեռացվեցին վրաց-հայկական սահմանի մաքսային կետի բոլոր հայ աշխատակիցները: Ի պատասխան՝ «Միասնական Ջավախք»-ը կազմակերպեց բողոքի մեծ ցույց՝ մի քանի ժամով փակելով վրաց-հայկական սահմանը: Ակցիային մասնակցեց մի

քանի հարյուր մարդ: Այդ բողոքը վրացական իշխանություններին ստիպեց տեղի տալ և հայերին նորից ընդունել աշխատանքի:

2002թ. Ախալքալաքում բացվեց Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի մասնաճյուղը, որի նպատակը, ինչպես հայտարարվեց, Ջավախքի հայ երիտասարդությանը վրաց հասարակության մեջ ինտեգրելն էր: Սակայն շուտով ակնհայտ դարձավ մասնաճյուղի բացման իրական, երկարաժամկետ նպատակը՝ փոխել Ջավախքի ժողովրդագրական իրավիճակը: Վրացական իշխանություններն Ախալքալաքի ուսումնական այդ հաստատությունում ստեղծեցին արտոնությունների համակարգ բացառապես վրաց ուսանողների համար: Արդյունքում՝ Վրաստանի տարբեր շրջաններից Ախալքալաք եկած վրացիները կազմեցին մասնաճյուղի ուսանողների գերակշիռ մեծամասնությունը: «Միասնական Ջավախք»-ը, քաջ գիտակցելով, թե ինչպիսի վտանգ է ներկայացնում Ջավախքի ապագայի համար այդ բուհը, հետևողականորեն հանդես էր գալիս նրա այդպիսի գործունեության դեմ:

2006 թ. հոկտեմբերին Վահագն Չախալյանի առաջնորդած «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինք» քաղաքական շարժումը մասնակցեց Վրաստանի Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Այդ ընտրությունների արդյունքում «Միասնական Ջավախք»-ը ըստ պաշտոնական տվյալների հավաքեց Ախալքալաքի շրջանում ձայների շուրջ 30%-ը (իսկ Ախալքալաք քաղաքում, անգամ, ունեցավ ձայների առավելություն իշխող կուսակցության նկատմամբ)՝ ստանալով համապատասխանաբար՝ 3 տեղ սակրեբուլոյում (տեղական ինքնակառավարման մարմին): Այնուամենայնիվ, Դաշինքը հրապարակավ վիճարկեց ընտրությունների արդյունքները՝ հայտարարելով, որ դրանք կեղծված են (հետագայում Վահագն Չախալյանի դեմ առաջադրված մեղադրանքներից մեկն ուղղակիորեն առնչվում էր ընտրությունների արդյունքների բողոքարկմանն ուղղված հետընտրական հանրային բողոքի ցույցի կազմակերպմանը):

Վահագն Չախալյանն եկել էր այն եզրակացության, որ վրացական իշխանությունների խտրական քաղաքականությանը հնարավոր է հաջողությամբ հակազդել միմիայն ժողովրդի կազմակերպված դիմադրությամբ: Նման մոտեցումն, իրոք, արդյունավետ եղավ և, ինչպես արդեն նշվեց, մի շարք հարցերում վրացական իշխանությունները հարկադրված եղան գի-

ջումներ կատարել:

2008թ. հուլիսի 17-ին, Հարավային Օսիայում պատերազմի բռնկումից 20 օր առաջ Ախալքալաքի շրջանի ոստիկանապետ Մամվել Պետրոսյանի տան մոտ տեղի ունեցած հանելուկային պայթյունը առիթ դարձավ Վահագն Չախալյանի եւ նրա առաջնորդած կազմակերպությունների նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար: 2008թ. հուլիսի 17-ին ոստիկանության աշխատակիցները զենք փնտրելու պատրվակով՝ ապօրինի կերպով ներխուժեցին և խուզարկեցին «ՋԵՄՄ»-ի և «Ջավախքի երիտասարդական ռադիո»-ի գրասենյակները: Խուզարկության արդյունքում զենք չհայտնաբերվեց: 2008թ. հուլիսի 21-ին, այսինքն՝ իրավապահ մարմինների՝ «Միասնական Ջավախք»-ի ակտիվիստների դեմ գործողությունների 5-րդ օրը, Չախալյանների տուն ներխուժեցին զինված հատուկ ջոկատայիններ և խուզարկության ժամանակ Վահագնի, նրա հոր և անչափահաս եղբոր մահճակալների տակ «հայտնաբերեցին» զենք ու զինամթերք: Բոլոր երեք Չախալյանները ձերբակալվեցին՝ ապօրինի զենք և զինամթերք պահելու մեղադրանքով, և նրանց դեմ հարուցվեց քրեական գործ: Ծնումների ենթարկվեցին «Միասնական Ջավախք»-ի մի շարք ակտիվիստներ և Վահագնի բարեկամները:

Նախաքննությունը և դատական գործընթացն իրականացվեցին Վրաստանի Սահմանադրության և քրեական-դատավարական օրենսգրքի, ինչպես նաև Վրաստանի կողմից վավերացված Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի կոպիտ խախտումներով: Ակնհայտ է, որ Չախալյանների ձերբակալությունը, դատավարությունը և կայացված դատավճիռը վրացական իշխանությունների քաղաքական պատվերի կատարումն են՝ Վահագն Չախալյանի քաղաքական գործունեությունը չեզոքացնելու նպատակով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական խոսք	3
Բանտային քաղաքական գրառումներ (նոյեմբեր 2009թ.-հունվար 2010թ.) . . .4	
Վահագն Չախալյանի հայտարարությունը (28 հունվար 2009թ.)	19
Վահագն Չախալյանի բաց մամակը Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլիին (մարտ 2009թ.)	22
Վահագն Չախալյանի պաշտպանական խոսքը՝ ասված Ախալցխայի շրջանային դատարանում 2009թ. ապրիլի 7-ին	25
<i>Հավելված</i>	
Վահագն Չախալյանի քաղաքական գործունեությունը 2001-2008թթ.	28

ՎԱՏԱԳՆ ՉԱԽԱԼՅԱՆ

ԲԱՆՏԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ Գ Ր Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:
Երևան, Տերյան 44: